569 Երբ նայեցա այն աղբյուրին,

1. Երբ նայեցա այն աղբյուրին,
Որ բացված էր վասն մեղքիս,
Հետևեցա Հոգու ձայնին,
Որ հարցուց՝ կմաքրվի՞ս:

Կգովեմ զԱյն, (2)
Փառք մորթված Գառնուկին,
Թող գովեն զԱյն բոլոր ազգեր,
Զի Անոր արյամբ կսրբվին:

2. Ճամբան շատ նեղ էր ու դժվար,
Իզուր եղան խնդրանքներս,
Ինչ բանի, որ սիրտս կբաղձար,
Մոխիր դարձան իմ առջևս:

3. Բայց երբ սիրտս մտավ Հոգին,
Բոցավառեց կրակով զայն,
Կուտամ անվերջ փառք Գառնուկին,
Անթիվ փառք Իր սուրբ Անվան:

4. Կօրհնեմ անունն ես Հիսուսի,
Ուրախ եմ՝ զիս առավ ներս,
Խավարեն զիս հանեց լույսի,
Ներեց բոլոր իմ մեղքերս:

5. Փա՛ռք հավիտյան Հորն Աստծուն,
Փա՛ռք և Որդուն՝ Հիսուսին,
Փա՛ռք, փա՛ռք ըլլա Հոգուն Սրբո,
Փա՛ռք, պատիվ Երրորդության: